ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՄԵՓՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Սույն հոդվածում քննության են առնված պատմական Արցախի տարածքում հայտնաբերված այն վիմագրերը, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և աշխարհիկ իրավունքի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն:

Միաժամանակ, հեղինակը փորձ է կատարում բացահայտելու և բնութագրելու մեր երկրամասում գտնվող վիմագրերի պատմահրավական արժեքն ու նշանակությունը՝ խորապես գիտակցելով և չբացառելով հանդերձ, որ իր ուսումնասիրությունը զերծ չի լինելու թերություններից:

Իր հերթին, վիմագրերը վկայում են, որ Արցախում ազգային-պետական իշխանությունը երբեք չի ընդհատվել, չի մարել և շարունակվել է մինչև 19-րդ դարի 10-ական թվականները, որպես հայոց պետականության մի փոքրիկ, բայց կարծր բեկոր:

Արցախի վիմագրերը ոչ միայն խոսուն վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու, այլև կարևոր կռվան Արցախի հարցի արդարացի լուծման գործընթացում, քանզի, անկասկած, ելակետային դրույթներ են պարունակում առարկայական բանակցությունների համար:

Բանալի բառեր՝ *վիմագիր, եկեղեցական իրավունք, աշխարհիկ իրավունք, կանոնական իրավունք, Տիգրանակերտ, Գանձասար, Դադի վանք, Եսայի Աբու Մուսե, Հասան Ջալալ Մելիք Եգան, տապանաքար, պետականություն, զինանշան, նվիրատվություն, հողային վեճ, պայմանագիր:*

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք, թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք, թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ...Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարները:

Մակար Բարխուդարյան

Վիմագիր (պահլավերեն՝ vem-քար և հայերեն՝ գիր բառերից) բառը նեղ իմաստով նշանակում է քարի վրա փորագրված գրություն, սակայն գործածության ընթացքում իմաստն ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև իրերի, առարկաների, պատերի վրա փորագրված հիշատակության և մակագրության նմուշները: Վիմագիր արձանագրությունները չափազանց ստույգ և կարևոր տեղեկություններ են պարունակում հայ ժողովրդի բազմադարյա պատմության տարբեր հարցերի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն: Ընդունված է վիմագրերը բաժանել 4 խմբերի.

ա) շինարարական,

բ) հիշատակագրային և նվիրատվական,

գ) կրոնաբարոյական,

դ) իրավականոնական:

Հայ իրավունքի իրավահայտ աղբյուրներից մեկն էլ այն վիմագրերն են, որոնք

կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և աշխարհիկ իրավունքի հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրելով Անիի հնագիտական հուշարձանները՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին նշել է, որ «Մխիթար Գոշի, Սմբատի և ուրիշների Դատաստանագրքերի և այլ իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կառուցված հայ իրավունքի պատմությունը, առանց հայկական վիմագրական նյութերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասությամբ, թերասածությամբ, անճշտությամբ և երբեմն նույնիսկ հետևությունների լիակատար սխալությամբ, ինչպես արդեն հնացած ու դեն նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր միայն մատենագրական տվյալների հիման վրա, առանց հնագիտական ու վիմագրական հուշարձանների իրական լուսաբանության»:[1] Պատմական Արցախի վիմագիր արձանագրություններն առաջին անգամ մասնակիորեն ուսումնասիրվել են Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցի, Հովհաննես Ղրիմեցու և Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի կողմից: Վիմագրերի հայտնաբերման, ուսումնասիրման և տպագրման հարցում քիչ չէ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի[2], Խաչիկ վարդապետ Դադյանի, Հովսեփ Օրբելու[3] և Աշոտ Հովհաննիսյանի[4] ներդրումը: Մակար Բարխուդարյանը, ոտքով շրջելով և մեկ առ մեկ գրի առնելով պատմական Արցախի բնակավայրերը, ավերակները և արձանագրությունները, ընթերցողին ընդամենը մի բան է խնդրել՝ չձանձրանալ դրանք կարդալուց: 1960 թվականին Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ անհրաժեշտ համարվեց երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված և երկու ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքումն ու հրատարակությունը: Երկու հանրապետությունների միացյալ արշավախումբն իր աշխատանքն սկսեց պատմական Արցախ նահանգից: Գիտարշավի ընդհանուր ղեկավարն էր հայագիտության նվիրյալ Սեդրակ Բարխուդարյանը, իսկ ադրբեջանական խմբի ղեկավարը՝ արաբատառ արձանագրությունների մասնագետ Մ.Նեյմաթովան: Արցախում եղած արձանագրությունների ուսումնասիրությունը տևեց 4 տարի՝ 1960-1964 թթ.: Գիտարշավի հայ մասնակիցները հայտնաբերեցին, վերծանեցին, գծագրեցին և լուսանկարեցին 1071 արձանագրություններ, իսկ ադրբեջանցի մասնակիցները պատմական Արցախի տարածքում, բացի շուրջ 50 արաբատառ պարսկերեն տապանաքարերից, ադրբեջանական ոչինչ չգտնելով, սկսեցին տրտնջալ: Հայ և ադրբեջանական գիտնականներից կազմված արձանագրագիտական հատուկ գիտարշավի 1960-1964 թթ. աշխատանքի արդյունքները պետք է լույս տեսնեին Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների տիտղոսաթերթիկներով, սակայն հայտնի պատճառներով ադրբեջանցիները հրաժարվեցին դրանից: Այն լույս տեսավ միայն 1982թ. Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ՝ դիվան հայ վիմագրության V պրակում (այսուհետ՝ Դիվան):[5]

Արցախի վիմագրերի ուսումնասիրման հարցում չափազանց մեծ է ականավոր հայ գրող և պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի կատարած աշխատանքը, առանց որի պատմական ժառանգության՝ մեր երկրամասի բազմադարյա պատ-

[1] *Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Երևան 1996, էջ 8:*

[2] *Մակար Բարխուդարյան, Արցախ, Երևան, 1996, (այսուհետ՝Արցախ):*

[3] *И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963 г.:*

[4] *Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան 1959:*

[5] *Դիվան հայ վիմագրության պրակ V,Արցախ, 1982,(այսուհետ՝Դիվան):*

մության շատ հարցեր կմնային չհետազոտված և չլուսաբանված:[6] Այդ տեսակետից որոշակի արժեք են ներկայացնում Շահեն Մկրտչյանի[7], Վահրամ Բալայանի[8] և Սամվել Կարապետյանի աշխատությունները[9]:

Մեր երկրամասում ստեղծված իրավական մտքի խոշոր հուշարձանները՝ Վաչագան Բարեպաշտ թագավորի Կանոնական Սահմանադրությունը, Դավիթ Ալավկա որդու Կանոնական օրինադրությունը և Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չէին կարող հասու լինել հասարակ ժողովրդին, և այդ աշխատությունների մի շարք դրույթներ, բնականաբար, այս կամ այն ձևով պետք է իրենց արտացոլումը գտնեին պատմամշակութային հուշարձանների վրա փորագրված արձանագրություններում: Նկատի առնելով այդ հանգամանքը՝ մեր կողմից փորձ է արվում պետականության և իրավունքի տեսանկյունից բացահայտելու և բնութագրելու պատմական Արցախի տարածքում գտնվող վիմագրերի պատմաիրավական արժեքն ու նշանակությունը՝ խորապես գիտակցելով ու չբացառելով հանդերձ, որ այն, այնուամենայնիվ, զերծ չի լինելու թերություններից:

Արցախի տարածքում ամենահին արձանագրությունը հայտնաբերվել է 2008 թվականին՝ արցախյան Տիգրանակերտի պեղումների ժամանակ: Քաղաքը գտնվում է արցախյան գոյամարտի տարիներին (1991-1994 թթ.) հայոց բանակի ազատամարտիկների կողմից ազատագրված նախկին Աղդամի շրջանի Վանքասարի Շահբուլաղ կոչվող աղբյուրի մոտ: Պեղումների ընթացքում երևան է հանվել հայկական եկեղեցի, որի պատի տակ հայտնաբերված և V-VII դարերին վերագրվող խեցեղեն փոքրիկ սկավառակի վրա հայերեն բովանդակությամբ արձանագրությունը մասնագետները վերծանել են. «ԵՍ (ՎԱՉ) Է ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն» կամ «ԵՍ ՎԱՉ (ԱԳԱՆ) ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն9: Մասնագետները հավանական են համարում, որ կլոր խեցեղեն սկավառակն արքայական կամ իշխանական կնքադրոշմի դեր է կատարել, որով կարող էին վավերացվել աշխարհիկ կամ հոգևոր փաստաթղթեր կամ եկեղեցական մասնատուփեր: Հարկ է նշել, որ Վաչէ կամ Վաչագան անձնանուն կրողները վաղ միջնադարյան Արցախում իրական և հանրահայտ անձնավորություններ են եղել: Պատմիչ Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ Վաչագան արքան Ամարասում հայտնաբերված սրբերի մասունքները կնքել է արքայական մատանիով, իսկ արքայի կողմից Աղվենի ժողովում ընդունված Կանոնական Սահմանադրությունը կնքվել է ինչպես Վաչագան արքայի, այնպես էլ ժողովի բոլոր մասնակիցների կնիքներով:[10]

Հայերեն արձանագրություններ են հայտնաբերվել նաև Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր համալիրում, որոնք նույնպես վերծանության ընթացքի մեջ են:

Հայկական հողի վրա մինչև այժմ հայտնի գիր-թվական ունեցող հնագույն վիմագիր արձանագրությունը (853 թ.) հայտնաբերվել է Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ. Հակոբա վանքի արևմտյան պատի մեջ: Դա մի խաչքար է, որի պատվանդանի վրա փորագրված արձանագրության համաձայն՝ խաչը կանգնեցվել է Հայաղվանքի իշխան Հովհաննեսի ժամանակներում՝ վանքի եպիսկոպոս Սողոմոնի կողմից: Հովհաննեսը հայազգի այն իշխանն էր (837-854 թթ.), ով իր կատարած քաջագործությունների համար արաբների կողմից

[6] Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994, Գանձասար, Երևան, 1981; Խաչենի իշխանությունը X-XVI Դարերում, Երևան, 1975; Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան 1998; Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981 և այլն:

[7] Շահեն Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:

[8] Վահրամ Բալայան, Արցախի պատմություն, Երևան, 2002:

[9] Самвел Карапетян, Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха, Ереван, 2000:

[10] Հնագիտական ուսումնասիրություններ Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 12:

արժանացավ բարձր պաշտոնի /Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների տեր/ և պարգևների: Խոսքը վերաբերում է այն ժամանակներին, երբ արաբական զորավար Բուղան գրավել էր ամբողջ Այսրկովկասը, բայց անկոտրում դիմադրության հանդիպել Արցախում: Հետագայում քաջ Հովհաննեսի եղբոր՝ Ատրներսեհի որդին, Արևելքի մեծ իշխան Համամ-Գրիգորը, վերականգնեց Հայաղվանքի թագավորությունը (881 թ.):

Արցախի Տիգրանակերտից մոտ 6 կմ հեռավորության վրա, ադրբեջանաբնակ Սոֆուլու գյուղում, ազերի գիտնականները 1950-ական թվականներին հայտնաբերեցին հայերեն արձանագրությամբ մի տապանաքար: Ըստ ուսումնասիրողների՝ տապանաքարը դրված էր Համամ թագավորի՝ ողբերգաբար մահացած ավագ որդու գերեզմանի վրա: Ազերիները տապանաքարի հայտնաբերման վայրն անվանեցին Գյավուր կալա (Անհավատի բերդ) և տապանաքարը տեղափոխեցին Ադրբեջանի պատմության պետական թանգարան: Համամ-Գրիգորն արքայական թագ է կրել և այնքան մեծ է եղել նրա հեղինակությունը, որ նրա միջամտությամբ՝ փրկագնի վճարման դիմաց, արաբների կողմից գերված Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսն ազատվել է գերությունից: Հասկանալի է, որ նման գործ կարող է կատարել հզոր իշխանություն ունեցող մարդը: Ըստ ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի նախկին փոխտնօրեն Ա. Մարտիրոսյանի հետազոտությունների՝ Համամ թագավորի և նրա կնոջ գերեզմանը գտնվում է Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղի հին գերեզմանատանը: Տապանաքարի վրա փորագրված են Համամ-Գրիգորի և նրա կնոջ պատկերները:

Հովհաննես իշխանի ժամանակներում արաբների դեմ մղվող պայքարում Հովհաննեսից ոչ պակաս աչքի են ընկել նաև Արցախի հարավային մասի իշխանապետերը: Իշխան Եսայի Աբու Մուսեն, որին արաբական աղբյուրները «հայոց պատրիկ» են կոչել, իր հետնորդներին թողել է մի այնպիսի ժառանգություն, որի կրողները «քարակերտ մատյաններում» հանդես են եկել իշխանաց իշխան կամ թագավոր տիտղոսներով: Հադրութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող «Կարմիր եղցու» (եկեղեցի) պատուհանի կամարի քարն ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Ի ՆԽԹ (1000 թ.) թուին Հայոց, ի թագաւորութեանս տեառն Գագիկա՝ որդու Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի շինեցի տուն Աստծո» (Դիվան, էջ 173): Քարն այժմ պահվում է Ստեփանակերտում՝ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում: Այդ նույն Գագիկ թագավորը, ինչպես արդեն նշել ենք, Ձուխտ Բարևածառ ավերակ երկու եկեղեցիներից մեկի խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ հանդես է գալիս որպես Աղվանից պետության (նեղ իմաստով՝ Արցախ՝ Ա.Հ.) իշխանաց իշխան (Դիվան, էջ 169): Վերոնշյալ երկու վիմագրերը, ինչպես նաև Տումի գյուղի մոտ գտնվող «թագավորի պալատ», «թագավորի գերեզման», «թագավորի աղբյուր» և թագավորի անունը կրող մի շարք այլ վայրեր վկայում են, որ Գագիկ թագավորն իրական իշխանություն է ունեցել Արցախի հարավային մասում, ու այդ իշխանությունը դարերի ընթացքում չի ընդհատվել և տարբեր անվանումներով շարունակվել է մինչև XIX դարը: Դժվար չէ վիմագրերով ճշտել նաև Արցախի հարավային սահմանները: Արցախի հարավային մասը, որը միջնադարում կոչվում էր մյուս Հաբանդ կամ ուղղակի Հաբանդ, նշանավոր է եղել իր Ամարաս և Գտիչ եպիսկոպոսանիստ վանքերով: Ուշ միջնադարում, Հաբանդը վարչականորեն բաժանվելով, ստացել է Դիզակ՝ Հաբանդի (հարավային մասը) և Վարանդա (հյուսիսային մասը) անունները՝ մոռացության տալով երկրամասի հին անունը: Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ գտնվող Գտչավանքը, որն ավերվել էր մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ, 1241 թվականին վերանորոգման ենթարկվեց Ամարասի երկու վանական եղբայրների կողմից, որոնց վանքի հյուսիսային պատին թողած արձանագրության տվյալներից կարելի է պատկերացում կազմել Արցախի հարավային սահմանների և նրա մեջ մտնող եկեղեցական թեմերի վերաբերյալ: Արձանագրության մեջ թվարկված են եկեղեցական երեք թեմ և

վարչատարածքային տասներկու միավորներ՝ իրենց անվանումներով, սահմաններով և սահմանային գետերով (Դիվան, էջ 182, 183): Բնակավայրերի ու գետերի աշխարհագրական անվանումները մեզ հուշում են, որ Արցախի հարավային սահմանն Արաքս գետն էր, ինչպես կար մինչև 44-օրյա պատերազմը, իսկ հյուսիս-արևմտյան սահմանը ներառել է Քաշաթաղի շրջանի մի մասը:

Արցախի կենտրոնական և հյուսիսային մասերում Առանշահիկ Համամ թագավորի տոհմաշղթան անխափան շարունակվեց նաև նրա սերունդների կողմից: Այդ շղթայում իր պատվավոր տեղն ունի Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Հասան Մեծը, ով Դադիվանքում իր իսկ անունից փորագրել տված արձանագրության մեջ (1182 թ.) մատնանշել է, որ 40 տարի շարունակ պատերազմներ է մղել հայրենի երկրի թշնամիների դեմ և միշտ էլ հաղթել: Ակնհայտ է, որ միայն հզոր պետականություն ունեցող մարդը կարող է իր երկրում նման բովանդակությամբ արձանագրություն փորագրել տալ: Ճիշտ է, արձանագրությունից չի երևում, թե Հասան Մեծն ում դեմ է պատերազմել, սակայն նույն վանքի վրա իշխանուհի՝ Արզու խաթունի անունից փորագրված արձանագրությունը հուշում է մեզ, որ պատերազմը մղվել է թուրքերի դեմ և հանուն քրիստոնեական հավատի, որի ժամանակ նահատակվել են նաև քաջ իշխանի երկու որդիները (Դիվան, էջ 198,199): Այդ երկու արձանագրությունները նաև կարևոր տվյալներ են պարունակում մեր երկրամասի ռազմագիտական պատմությունն ուսումնասիրողների համար: Հասան Մեծին փոխարինել է նրա ավագ որդին՝ իշխանաց իշխան Վախթանգը (1182-1214 թթ.), այն Վախթանգը, որի մոտ Մխիթար Գոշը ձեռնամուխ եղավ իր հռչակավոր Դատաստանագիրքը գրելուն:

Արցախի հռչակավոր իշխանաց իշխան Հասան-Ջալալն իր հայրենանվեր գործունեությամբ ու թողած ժառանգությամբ հավերժացավ ոչ միայն գրչագիր մատյաններում, այլև քարագիր արձանագրություններում:

Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ներսում, հյուսիսային պատի ամբողջ լայնությամբ Հովասափ Միակյացը (ճգնավոր) 1240 թ. 27 տողերի վրա արձանագրել է Հասան-Ջալալ Դոլայի ուխտը կամ կտակը: Կտակում Հասան-Ջալալը հանդես է գալիս «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱՒՈՐ ԽԱԻԽԱՆԱԲԵՐԴԻ ՅՈԳՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՒՔ» խրոխտ տիտղոսներով, իսկ Առաջածոր գյուղի արևելյան մասում գտնվող եկեղեցու մեծ քարի վրա փորագրված արձանագրության մեջ Հասան-Ջալալն իրեն անվանում է «Աստծո արքա… Իշխան Խաչենի և Առանի»[11]: Հասան-Ջալալի եղբայրը՝ Սմբատը, Խանչալ խաչ կոչվող վայրում կանգնեցրած արձանագրության մեջ եղբորը ևս «արքա» տիտղոսով է անվանում: Դժվար չէ կռահել, որ նման բարձրահունչ տիտղոսներ կրող անձն օժտված է եղել պետական հզոր իշխանությամբ, որի տիրապետությունը տարածվել է ամբողջ Հայաղվանքի վրա՝ ներառյալ մինչև Կուրի և Արաքսի միախառնման վայրը:

Ճիշտ է, Հասան-Ջալալը հարկատու էր մոնղոլ-թաթարներին և նրա աղջիկներից մեկը՝ Ռուզուքանը, մոնղոլ զորավար Բորա-Նոյինի կինն էր, սակայն այդ քայլը կատարվել է դիվանագիտական նկատառումներով, և դա տվել է իր արդյունքները: Հասան-Ջալալի միջնորդության շնորհիվ, հայկական Կիլիկիայի Հեթում թագավորի և մոնղոլական մեծ խան Մանգուի միջև 1253 թ. կնքված պայմանագրի ուժով Կիլիկյան հայկական պետությունը մոտ մեկ հարյուրամյակ զերծ մնաց հարևան պետությունների ավերածություններից:

Հասան-Ջալալն անձամբ պատկառելի շքախմբով եղել է Բաթու խանի մոտ, արժանացել պատիվների և կարողացել հետ վերադարձնել թուրքերի կողմից խլված հայրենի մի շարք բերդեր և բնակավայրեր: Հասան-Ջալալի իշխանապետությունն

[11] *Մովսես Կաղանկատվացի, պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 59, 60, 62, 69:*

օժտված է եղել պետականության ակնհայտ բնորոշիչներով:

Կտակում Հասան-Ջալալը հանդես է գալիս որպես թագավոր Խոխանաբերդի «ՅՈԳՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱԻՔ» եզրույթով: Խոխանաբերդը թագավորի կենտրոնական բերդն էր և գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմաց: Կտակում Հասան-Ջալալի տիրապետության սահմանները նշված չեն, և այդ առումով միայն շեշտված է դեռևս ոչ մի աշխատությունում չօգտագործված և բառարաններում չստուգաբանված «յոգնասահման» բարդ բառը (յոգ-շատ, բազում, հոգնակի): Մեր կարծիքով, «յոգնասահման» բառի տակ փորագրողը նկատի է ունեցել երկրի բազմաբնույթ և տարատեսակ աշխարհագրական սահմանագծերը: Իսկ արձանագրության մեջ օգտագործված «ԲՆԱԿԱԻՈՐ» բառի տակ նկատի է ունեցվել, որ Հասան-Ջալալն իր երկրի բնիկ տերն է:

Վիմագրության և մատենագրության մեջ չափազանց աղքատիկ տվյալներ են պահպանվել Արցախի արտաքին սահմանների և ներքին վարչատարածքային սահմանաբաժանումների վերաբերյալ: Այդ հարցում մեզ օգնության է գալիս Մ.Գոշը, ով սահմանները բաժանում է չորս խմբերի՝ գավառների, գյուղերի (համայնքների), հողամասերի, շենքերի և շինությունների: Համաձայն Գոշի Դատաստանագրքի ՄԽէ գլխի՝ «Գավառների, նմանապես և գյուղերի սահմանները հաստատվում են լեռներով, գետերով և արձաններով: Եվ գյուղերը, որոնք շինված են երկու կամ երեք գավառների մոտ, երկուսի բաժանվեն առավելությամբ և նվազությամբ. նմանապես հանդերն ու գյուղերի մոտ տարածքները, որոնք բուսնել են հանդերի սահմանների վրա: Իսկ այգիների ցանկապատերը թող կրկնակի լինեն, ամեն մեկն ունենա իր ցանկապատը, թեպետ սկզբից դրված ցանկապատը բավական էր երկուսին էլ, բայց, այնուամենայնիվ, թող առաջին բաժանարար ցանկապատը արգելք չհանդիսանա, որ մյուս կողմն էլ դնի իր ցանկապատը: Ըստ այս կանոնի դրվեն նաև տների պատերն ու սրա նման մնացած ամեն ինչը»[12]: «Արձանների» տակ Գոշը նկատի է ունեցել սահմանաքար կոթողները, որոնք գոյություն ունեին դեռևս Արտաշեսյան թագավորության ժամանակ: Ա.Մարտիրոսյանը, Քարվաճառի շրջանի Դադիվանքի հյուսիսային լեռնաբազուկի վրա (նախկին Քելբաջարի շրջանի Բալուղայա քրդաբնակ գյուղի մոտ) հայտնաբերել և նկարել է սահմանակոթող հիշեցնող քար, որը նման է այն սահմանաքարերին, որոնք դրվել են գյուղերի և ագարակների սահմանագլուխներին՝ Արտաշես Ա թագավորի ձեռնարկած հողային բարեփոխումների կապակցությամբ և որոնցից մի քանի տասնյակ հայտնաբերվել են Սյունիքում և Սևանա լճի առափնյա շրջաններում: Կարծում ենք՝ Շահումյանի շրջանում հայտնաբերված սահմանաքարի տեղը Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանը պետք է լիներ, քանի որ այն կարող է լույս սփռել պատմական Արցախի վարչատարածքային սահմանաբաժանումների և հողային հարաբերությունների հարցերի վրա, միաժամանակ լուրջ կռվան կհանդիսանար, որ պատմական Քարվաճառի շրջանի օրինական տերերը հայ ժողովուրդն է: Ամենայն հավանականությամբ, միջնադարյան Արցախում սահմանային հարցերի և սահմանավեճերի լուծման գործընթացում առաջին հերթին ղեկավարվել են Գոշի Դատաստանագրքի դրույթներով: Հողային վեճերով կարևոր նշանակություն է ունեցել վիճելի տարածքի սահմանային եզրը կամ ծայրը որոշելու հարցը: Մինչխորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի գյուղերում ավանդական սովորություն կար՝ պապերից ժառանգած կամ սեփականության իրավունքով պատկանող հողամասի անկյուններում կես մետրից ավել խորության վրա հողի մեջ ածուխ էին թաղում և վեճ ծագելու դեպքում դրա միջոցով շատ հեշտ որոշում սեփականատիրոջ հողի սահմանները:

---

[12] Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի (աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի), Երևան, 1975, էջ152 (այսուհետ՝ Գիրք Դատաստանի): Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 1,Երևան, 2001, էջ 527 (այսուհետ՝ Գանձարան):

Արցախի Հասան-Ջալալ իշխանաց իշխանի պետականության բնորոշիչներից մեկն էլ նրա զինանշանն է: Գանձասարի վանքի գավթի հյուսիսային մուտքի դռան վերևի մասում պատկերված են դեպի իրար մոտեցող երկու կենդանիներ՝ բացված երախներով, կատաղի աչքերով, սուր ճանկերով, դեպի վեր ցցված պոչերով: Կենդանիների վզի ակոսավոր փոսիկները առյուծների բաշեր են ենթադրում: Քանդակագործին հաջողվել է ընդգծել կենդանիների իշխանատենչ, կամային հատկանիշները: Աջակողմյան առյուծի դիմաց փորագրված է վեցաթև աստղ՝ իշխանության նշանը, որը պատմությանը հայտնի է Սողոմոնի աստղ անունով: Հասան-Ջալալի զինանշանի մասին մեր ձեռքի տակ գրավոր տեղեկություններ չունենք, սակայն որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ զույգ առյուծները Հասան-Ջալալի զինանշանն է, և նա ներկայացված է աջակողմյան առյուծի պատկերում, իսկ որդին՝ Աթաբեկը, ձախակողմյան: Զույգ առյուծներ են առկա նաև Գյուլիստանի մելիքության զինանշանում, որը փորագրված է հակառակորդի կողմից բռնազավթված ԼՂՀ Շահումյանի շրջանի Կարաչինար կամ Աղջակալա գյուղում գտնվող մելիքական շինության դարպասի բարավոր քարին[13]: Զինանշանում մարտնչող առյուծները պատկերված են իրար դեմ դիմաց, բաց երախներով հետևի ոտքերի վրա հենված և պոչերը վեր ցցած դեպի մեջքները: Մարտնչող առյուծների պատկերաքանդակով բարովաքարը՝ ՌՅԺԷ (1868 թ.) արձանագրությամբ, մինչև հակառակորդի կողմից ԼՂՀ Շահումյանի շրջանը բռնազավթելը, պահվում էր շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարանում: Զույգ առյուծները հայկական հավատալիքներում դրսևորվում են նաև որպես տան, շինության, բնակավայրի, երկրի հսկիչ-պահապաններ:

Հասան-Ջալալի պետականության հզորության մասին է վկայում նաև Սանկտ Պետերբուրգի էրմիտաժում պահվող՝ նրան պատկանած դաշյունի մուգ կանաչ նեֆրիտե երախակալը, որը պարունակում է կցագրերով փորագրություն՝ «ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼ ԻՇԽԱՆ ԽԱՉԵՆՈՅ»: Հասան-Ջալալին փոխարինեց նրա անդրանիկ որդին՝ Աթաբեկը, ով Արցախի վիմագիր արձանագրություններում նույնպես հանդես է գալիս Արցախի իշխանաց իշխան խրոխտ տիտղոսով: Վիմագրերը վկայում են, որ պետականության մի շարք բնորոշիչներով օժտված են եղել նաև Արցախի մելիքները:

Դիզակի մելիք Եգանի անձնավորությանն ու հասարակական-քաղաքական գործունեության վերաբերյալ տվյալներն արձանագրված են Հադրութի շրջանի Տող գյուղում գտնվող նրա ապարանքի ընդունարանի մուտքի ճակատակալ քարին: Արձանագրությունը, որը գրված է բարբառային լեզվով, գրչության որոշ օրինաչափ շեղումներով, պարսկա-թուրքական բառերի առկայությամբ, առավել հաջող վերծանել է պատմաբան, իրանագետ Հակոբ Փափազյանը, մեջբերում ենք. «ՌՋՋԶ» (1737 թ.): Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես՝ Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է մելիք-Եգան, նախապես ժողովուրդը հավաքեց և ինձ քյոխվա (տանուտեր) կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասպ թագավորին որոշ ծառայություններ մատուցեցի, և նա բերեց սրանց վրա ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին և երկիրը նրա ձեռքից վերցրեց: Սրան էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից (Կենտրոնական Իրան) շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի,

[13] Հայկ Դեմոյան, հայկական ազգային խորհրդանշաններ, Երևան, 2012, էջ 165,Արտակ Ղուլյանն իր «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները » աշխատությունում (Երևան, 2001) Գյուլիստանի մելիքության Աղջակալա գյուղը հայերեն սխալմամբ թարգմանել է Աղջկաբերդ անունով (էջ 128,129):Թուրքական Աղջակալա անունը հայերեն նշանակում է Սպիտակ բերդ, Նախկին Կարաքենդ կամ Ղըզղալա գյուղը, գտնվում է Արցախի Մարտունու շրջանում:

Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպիսությունը այդպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»:[14]

Հ. Փափազյանը, ճիշտ վերծանելով արձանագրությունը, միևնույն ժամանակ սխալմամբ եզրահանգել է, որ հայկական ինքնուրույն վարչաքաղաքական միավորման մեջ, հայտնի 5 մահալներից կամ մելիքություններից բացի, սկզբնապես մտնում էր նաև Քոչիզի կամ Քաշաթաղի մահալը, որտեղ վաղ ժամանակներից իշխում էին մելիք Հայկազի սերունդները: Պարզապես Հ.Փափազյանը Քաշաթաղի շրջանի նախկինում հայաբնակ Քոչիզ գյուղը շփոթեցրել է Վարանդա գավառի Քոչիզ ամրոցի (սղնախ) հետ, որը գտնվել է ԼՂՀ Մարտունու շրջանի Հերհեր և Ծովատեղ գյուղերի թիկունքում և մինչև մելիք Շահնազարյանների հետգրավումը՝ որպես մահալ, ենթարկվել է մելիք Եգանին: Քոչիզ բնակավայրը 3 անգամ հիշատակված է Հերհերի Սբ. Գրիգորիս եկեղեցու արձանագրություններում (Դիվան, էջ 166 -168):

Մելիք Եգանի ընդունարանի մուտքի արձանագրությունը վկայում է, որ XVIII դարի 30-ական թթ. Անդրկովկասում ձևավորվել էր մի նոր վարչաքաղաքական միավոր, որի ղեկավարն իր իրավունքներով հավասար էր Վրաստանի վալիներին, իսկ այդ ժամանակներում բեկլարբեկի տիտղոսը կրել են միայն Երևանի, Գանձակի և Թավրիզի խաները: Սա ցույց է տալիս, որ զենքի ուժով ձեռք բերված ազատությունը և ինքնավարությունը ճանաչվել էր Պարսկաստանի կողմից:

Մելիք Եգանը, լինելով հզոր անհատականություն, ճկուն և հավասարակշիռ քաղաքականություն է վարել պարսիկների և թուրքերի միջև և Արցախը համարել է որպես Հայաստան. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր (գերի՝ Վ.Հ.) գնալու»,-նշված է արձանագրության մեջ:

Հզոր է եղել մելիք Եգանի բազուկը նաև հոգևոր գործերում: Գտչավանքի եպիսկոպոս Մեսրոպ վարդապետի տապանաքարի վրա փորագրված գրությունը վկայում է, որ մելիք Եգանն է նրան եպիսկոպոս ձեռնադրել և կարգել վանքի առաջնորդ[15]:

Ղարաբաղի մելիքների գահերեց մելիք Եգան խանն ուներ իր իշխանապետությանն արժանի զինանշան, որի քանդակը պահպանվել է Հադրութի շրջանի պատմական Հողեր գյուղի մոտ գտնվող Կավաք վանքի ներսում: Ըստ պատմաբան Տ. Հայազնի, զինանշանը պատկերված է երկգլխանի արծվի տեսքով: Թռչնի մարմինը վահանաձև է: Մարմնի վերնամասից դուրս են գալիս երկու համաչափ, աղեղնաձև երկար վզեր, որոնք ավարտվում են կլոր գլխով. ընդգծված աչքերով ու սուր կտուցով: Արծվագլուխների վրա եռաճյուղ թագեր են: Թռչունը հենված է եռանկյունաձև պոչի վրա՝ ձախ ոտքի մագիլներով թևի վրա պահելով գնդավոր գլխով իշխանության նշան-մականը, իսկ աջ ոտքի մագիլներով՝ խաչը: Փաստորեն, արծիվը մագիլներում պահում է աշխարհիկ և հոգևոր իշխանության նշանները՝ մականը և խաչը: Պատմաբան Տ.Հայազնն առաջինն է նկատել, որ մելիք Եգանի զինանշանը որոշ նմանություն ունի նույն ժամանակաշրջանի ռուսական զինանշանին, որտեղ առկա է գրեթե նույնանման պատկերը, միայն այն տարբերությամբ, որ ռուսական արծիվը թևաբաց է և գլուխների արանքում առկա է ռուսական կայսրության թագը[16]:

Անձնական զենքը ևս կարող է լույս սփռել պատմական անձնավորության՝ աշխարհիկ իշխանության հզորության և կարգավիճակի մասին: Ներկայումս մասնագետների տրամադրության տակ կան բացարձակ արժեք ներկայացնող երեք թուր և մեկ գավազան՝ հայերեն մակագրություններով: Նախնական ուսումնասիրութ-

[14] *Հակոբ Փափազյան, Մելիք Եգանի ընդունարանի մուտքի արձանագրությունը :*

[15] *Արցախ, էջ 54:*

[16] *Տիգրան Հայազն (Պետրոսյանց), Հայկական իշխանական զինանշաններ, Երևան, 2005, էջ 86-88:*

յունները ցույց են տվել, որ դրանք պատկանում են մելիք Եգանին և, ըստ երևույթին, շահական ոսկեջրված կնիքով շքերթային թուրը և գավազան սուսերը մելիք Եգանը ստացել է Նադիր շահից[17]:

Արցախի գերագահ իշխանի տիրապետության սահմանները և փառքը հաստատում է Հադրութի շրջանի Տող գյուղի հանգստարանում գտնվող նրա տապանագիրը.

Եղև սիրեցեալ ամենայնին Նատիր անուն թագաւորին Տիրապետաց սայ ի երկրին Ի Աղուանից ի նահանգին Յոյժ պատուեցաւ Պարսից ազգէն Քան զիշխանս հայոց երկրին... ՌՃՂԳ (1744 թ.)[18]

Մելիք Եգանից ոչ պակաս հզոր աշխարհիկ իշխանություն է ունեցել Վարանդայի մելիք Հուսեյնը, որի տապանագրի գովեստը բնավ էլ ձևի համար չի գրվել, ըստ որի՝ երեսունհինգ գյուղերի տեր Վարանդայի հզոր իշխանը որևէ մեկին հարկատու չի եղել, թուրքերի դեմ պատերազմում միշտ հաղթող է դուրս եկել, հանդիսանալով հայոց աշխարհի թագն ու պարծանքը[19]:

Վարանդայի մելիքները նույնպես ունեցել են իրենց զինանշանը, որը, համաձայն տոհմական ավանդույթի, գրավել էր Պետրոս Մեծի և Նապոլեոնի ուշադրությունը: Զինանշանի վրա առկա է երեք տառից կազմված փակագիր. «Հայաստան», «Մելիք», «Շահնազար»: Արծվի գլխին պատկերված է եկեղեցու գմբեթ՝ խաչը վրան: Ներկայումս զինանշանը պահվում է ԱՄՆ Բոստոն քաղաքում[20]:

Անդրադառնալով կանոնաիրավական վիմագրերին, հարկ է նշել, որ դրանց մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նվիրագրերը և այն հիշատակագրերը, որոնց հեղինակներն իրական անձնավորություններ էին: Դրա հետ մեկտեղ, բավական շատ են այն նվիրագրերը, որոնց հեղինակներին (նվիրատուներին) հնարավոր չէ պարզել: Մի կողմից էլ, ժամանակը կատարել և կատարում է իր սև գործը, և անխաթար վիճակում գտնվող արձանագրությունների թիվն օրեցօր նվազում է: Եթե վիմագրերով ոչ միշտ է հաջողվում պարզելու նվիրատուների անձը և սոցիալական կարգավիճակը, ապա ամեն պարագայում՝ նվիրառուները վանքերը կամ եկեղեցիներն են: Վիմագրերում նվիրատվության առարկա են հանդիսանում տարբեր տեսակի անշարժ կամ շարժական իրերը, առարկաները, գույքային պարտականությունները և այլն: Որոշ արձանագրություններում շոշափվում են գույքի պատկանելիության, քանակի, արժեքի և օտարման պայմանների, ինչպես նաև նվիրառուների պարտավորությունների վերաբերյալ հարցեր: Քննարկենք դրանցից մի քանիսը.

Արցախի տարածքում նվիրատվության վերաբերյալ թվագրով ամենահին արձանագրությունը գտնվում է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 6-8 կմ դեպի արևմուտք մի սարահարթի վրա գտնվող Խադավանք կամ Խաթրավանք եկեղեցու արևելյան պատի վրա: Արձանագրության համաձայն՝ Տեր-Հովհաննեսը 1204 թ. վերակառուցել է այդ եկեղեցին, այնտեղ հավաքել գրքեր, խաչեր և մատյաններ, տնկել Ձոթաց այգին, ապա նոր մի այգի ևս գցել և այդ բոլորը Հաթերքի իշխանաց իշխան Վախթանգի միջնորդությամբ հանձնել իր եղբայր Հասանին ու նրա որդիներին: Նույն արձանագրության երկրորդ մասի համաձայն՝ Հասանն էլ ընդունել է ընծան, ինքն էլ իր հերթին Խնձորաբակի այգին իր սահմաններով նվիրել է վանքին (Դիվան, էջ 121, 122): Այս փաստերը հիմք են տալիս դատելու, որ Խաչենի տարածքում տեղական իշխանությունների այսօրինակ գործարքներն անգամ

[17] *Արտակ Մադոյան, Մելիք Եգանի նորահայտ թրերի արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 2013, հ.2, էջ 180-192:*

[18] *Արցախ, էջ 50;*

[19] *Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, հատոր 10, Երևան, 1964, էջ 178:*

[20] *Ярий Асадов, Родословные тайны армянских князей, Москва, 1997, стр. 91, 92:*

կատարվում էին Վախթանգի և նրա հետնորդների միջամտությամբ:

Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ. Հակոբա վանքի սրահի հարավային պատի արձանագրությունից իմանում ենք, որ Սմբատի որդի Գրիգորը Տեր-Սարգսի և Տեր-Վարդանի առաջնորդության տարիներին վանքին նվիրել է իր հայրենաբաժնից մեկ կիսավար իր հողով (Դիվան, էջ 13): Թվականն անհայտ է:

Վերոնշյալ կարգի արձանագրությունները շատ են տարածված Արցախի Հ անրապետության բոլոր շրջաններում: Հատկանշական է, որ նվիրատուները գույքը նվիրում են իրենց հոգու փրկության և մեղքերի թողության համար: Մյուս կողմից, հոգևոր հաստատությունը պարտավորվում է օրհնանք տածել, պատարագ մատուցել նվիրատուի կամ նրա մերձավոր հարազատների համար կամ էլ նրանց անունները նշել ժամասացության մեջ: Վերջում հավելվում է, որ արձանագրության պայմանները խափանողները պետք է արժանանան Աստծո դատաստանին և 318 հայրապետների նզովքին, անեծքին:

Վիմագրերի մեջ մի առանձին խումբ են կազմում այն նվիրատվությունները, որոնք կոչվում են «վախմ» (արաբերեն և թուրքերեն՝ վագըֆ)՝ եկեղեցուն կտակված բարեպաշտական նվեր, որոնք հարկման ենթակա չեն եղել: «Վախմ»-ները եղել են տարբեր տեսակների՝ ագարակներ, այգիներ, արտեր, հանդեր, հողեր, ձիթհանքներ, անասուններ, դրամական միջոցներ և այլն: Ասկերանի շրջանի Պտկեսբերգ վանքի արձանագրության համաձայն՝ Ղուկաս վարդապետը Խաչենագետի վրա կառուցած իր ջրաղացը հոգու փրկության համար նվիրել է վանքին (Դիվան, էջ 138): Քաշաթաղի շրջանի Քոչիզ գյուղի եկեղեցու արձանագրությունից նկատելի է, որ ոմն Հայկազ սրանոցը (ձիթհանք) «վախմ» է արել եկեղեցուն: Մարտունու շրջանի Հերհեր գյուղի Սբ. Գրիգորիս եկեղեցու մուտքի հյուսիսային կողմի արձանագրությունը փաստում է, որ Հերհերի ժողովուրդը, տանուտեր Ղասումի գլխավորությամբ, մեծ և փոքր ճանապարհի վերևի տափը, որն ի սկզբանէ «վախմ» էր Սբ. Աստվածածնին, այժմ իրենք «վախմ» են անում Սբ. Գրիգորիս եկեղեցուն (Դիվան, էջ 167):

Նման կարգի վիմագրերը ցույց են տալիս, որ «վախմ»-ի ձևով նվիրատվությունները տարածված են եղել XIII-XVI դարերում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ մոնղոլ-թաթարները, Լենկ-Թեմուրը և թուրքմենական վաչկատուն ցեղերն ասպատակում էին ամբողջ Այսրկովկասը: Իսկ ի՞նչն էր ստիպում հայ ավատատերերին՝ իրենց գույքը նվիրելու կամ էժան վաճառելու հոգևոր հաստատություններին: Պատճառներից մեկը պետք է որոնել նրանում, որ քաղաքական նկատառումներով միջնադարյան ավարառու ցեղերի որոշ ղեկավարներ բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում հայ հոգևորականության նկատմամբ՝ իրենց համար անհրաժեշտ դեպքերում վանքապատկան հողերն ազատելով հարկերից ու տուրքերից: Պատմությանը հայտնի է Ջահանշահի կին Բեգում Խաթունի 1462 թ. հրովարտակը՝ ուղղված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, նույն կաթողիկոսին տրված Յաղուբի 1478 թ. հրովարտակը, վանքին տրված՝ Շահ Աբաս 2-րդի 1650 թ. հրովարտակը, որոնց ուժով Գանձասարը զերծ մնաց բռնակալների հարստահարություններից և տնտեսական մեծ առաջընթաց ունեցավ: Մյուս կողմից՝ հնուց ի վեր պատիվ էր համարվում եկեղեցիների ու վանքերի սրբազան համարված հողում թաղվելու իրավունքը: Այդպիսի պատվի արժանացողը, թաղվելուց առաջ, իր հոգու պարտքն էր համարում շարժական կամ անշարժ գույքի նվիրաբերումով արտահայտել իր երախտագիտությունը սուրբ ուխտի նկատմամբ: Իսկ երբ մի վանք դառնում էր որևէ գերդաստանի տոհմային տապանատունը, այդ գերդաստանի ժառանգներն արդեն ոչինչ չէին խնայում իրենց տապանատունն առատության ու շքեղության մեջ պահելու համար: Եվ պատահական չէ, որ եկեղեցիներն ու վանքերը հենց այս եղանակով էլ դառնում էին ամենահարուստ հողատերերը, և նրանցից ամենանշանավորներն իրենց ավատական իրավունքներով

ետ չէին մնում աշխարհիկ հզորագույն իշխանավորներից[21]:

Հենց վերոնշյալ հանգամանքներով պետք է բացատրել, որ Արցախի ավատատերերի կողմից ամենամեծ նվիրատվություններն արվել են Գանձասարի վանքին: Կա նաև ուշադրության արժանի մեկ այլ հանգամանք. հայտնվելով քաղաքական անբարենպաստ պայմաններում, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով հայ ավատատերերը դրանք նվիրում էին հիմնականում սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին: Գանձասարի վանքի վրա առկա 182 արձանագրություններից 35-ը վկայում են նվիրատվությունների մասին: Մեջբերում ենք գավթի հյուսիսային պատի արևելյան մասի եռատող արձանագրությունը. «Ես շահնշես որդի Աղպուղին, վերին նովերին հողն տվի ի սբ. ուխտս Գանձասարայ, ով հողն հանե սուրբ Ովանեսիս կապած է» (Դիվան, էջ 58): Այս արձանագրության մեջ հետաքրքիրն այն է, որ «վերին նովերին» հողին հանդիպում ենք նույն արձանագրության կողքին Իսուբի՝ 1495 թ. արձանագրության մեջ. այստեղ ևս այն նվիրաբերվում է «Ի սուրբ ուխտս Գանձասարա» (Դիվան, էջ 56): Համանման օրինակի հանդիպում ենք նաև «Աշմանայ տափի հողն» երկու անգամ վանքին նվիրելու արձանագրություններում: Բ.Ուլուբաբյանը միանգամայն ճիշտ նշել է, որ զարգացած միջնադարում նվիրատվություններն այնքան էլ հաստատ ու անբեկանելի գործարքներ չէին և խախտվում էին նվիրատուի հարազատների կամ ազդեցիկ իշխանավորների կողմից: Այլապես ավելորդ պիտի լինեին նվերները, հանողների ու խախտողների հասցեներին ուղղված զանազան անեծքները, որ այնպես առատությամբ սփռված են մեր վիմագրերում[22]:

Շարժական գույքի նվիրատվության առարկա են հանդիսացել անասունները (եզներ և կովեր), դրամական միջոցները (դեկան, թուման, ստակ), սպասներ-իրեր-գործիքները (ավետարան, գավազան, խաչ, սկիհ և այլն): Նվիրատվության պայմանագրում, որպես նրա ենթատեսակ, առանձնանում է նվիրաբերությունը, որի տակ նկատի է ունեցվել գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, ինչն էլ շեշտվում է գործարքում: Եթե պայմանագրում գույքի օգտագործման նպատակը չի նշվում, ապա այն դիտվում է որպես սովորական նվիրատվություն: Նվիրաբերությունը նոր ինստիտուտ չէ, այն տարածված է եղել շատ հնուց: Գանձասարի վանքի հյուսիսային պատի կենտրոնական մասում, մեծ կամարի ներքո հիշատակված է, որ Պողոս-բեկ Ձալալյանցի կինը՝ Նազլուն, իր կամքով գրած կտակագրի համաձայն (1864 թ.)՝ ամուսնու և զավակների մեղքերի թողության համար վանքի միաբանությանը դրամական միջոցներ է տվել (գումարը չի նշված՝ Վ.Հ.), իր հերթին, կտակակատարը (վանքը) պարտավորվել է գումարը չծախսել, այլ միայն կարող էր գումարը տոկոսով տալ և ստացված տոկոսների գումարից վարձատրել վանքի սրբերին՝ եկեղեցական նախատոների կապակցությամբ պատարագ մատուցելու համար[23]:

Ինչպես Դադիվանքի, այնպես էլ Գանձասարի վիմագրերը վկայում են, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կենտրոնացված են եղել իշխող տոհմի ձեռքում, ինչը խոշոր խթան էր եկեղեցական հարստության աճի և զարգացման համար:

Վիմագրերից մի քանիսը կարգավորում են առուծախի պայմանագրերից բխող իրավահարաբերություններ: Զրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքի արձանագրությունների համաձայն՝ միաբանությունը վանքի համար գնել է այգիներ, հողամասեր և ավետարան (Դիվան, էջ 107): Մեկ այլ արձանագրություն փաստում է, որ Շերբարիք անունով մեկն իր ռազմի սայլերի կեսը 25 դեկանով (դահեկան, պարսից

[21] *Բագրատ Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 383:*

[22] *Նույնի, էջ 384:*

[23] *Գիրք Դատաստանի, էջ 44, Գանձասար, Երևան, 1981, էջ 101:*

Դարեհ արքայի պատկերով դրամական միավոր՝ Վ.Հ.) վաճառել է Շահի որդուն՝ Տեր-Ռուբենի ներկայությամբ: Առուծախի գործարքի ժամանակը նշված չէ, բայց Տեր-Ռուբենը հիշատակված է Խաթրավանքի 1267 թ. մեկ այլ արձանագրության մեջ (Դիվան, էջ 128, 129): Արձանագրությունը վկա է հանդիսանում հեռավոր անցյալում մեր երկրամասում եղած առևտրի և դրամաշրջանառության մասին:

Մի եզակի արձանագրություն եղել է Արցախի հյուսիսային բնակավայրերից մեկի՝ պատմական Գետաբակի (ներկայումս՝ Ադրբեջանի Գետաբեկի շրջան) Չարեքա անապատ եկեղեցու պարսպի մուտքի գլխին, որը շինարարական կապալի պայմանագրի տարրեր է պարունակում: Համաձայն արձանագրության՝ վարպետ Մկրտիչը 1717 թ. կառուցել է եկեղեցու պարիսպը՝ 28 թուման ստանալու պայմանով, և վարդապետ Օվանեսը վարձատրել է նրան (Դիվան, էջ 268): Անհամեմատ քիչ խումբ են կազմում այն վիմագրերը, որոնք վերաբերում են Արցախի հարկապարհակային քաղաքականությանը:

Վիմագրերը մեզ նաև պատկերացում են տալիս հասկանալու, թե անցած դարերում ինչպիսին է եղել հասարակ ժողովրդի իրավական դրությունը: Դադիվանքի գմբեթավոր եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի 19-տողանոց արձանագրությունը փորագրված է մեծ իշխան Վախթանգի կնոջ՝ Արզու խաթունի անունից (1214 թ.): Հայոց Արևելից կողմանքի թագուհին, պատմելով վանքի կառույցի, կառուցողի և թուրքերի դեմ մղված պայքարում իր որդիների զոհվելու հանգամանքների մասին, միաժամանակ մեծամեծ նվերներ է տալիս վանքին՝ հողատարածքներ իրենց անվանումներով, նրանց հետ նաև՝ «երկու տուն» (ծուխ՝ Վ.Հ.) Յարփա: Նույն եկեղեցու արևմտյան պատի հարավային մասում արձանագրված է, որ Հաթերքի մեծ իշխան Հասանի որդի Գրիգորը 1224 թ. տվել է «Ի Դադի գերեզմանս (իրենց տոհմական տապանատանը) Դ (չորս) տուն շինական» (Դիվան, էջ 198-201): Մեծ իշխանի որդի Սակռը 1216 թ. Վաղուհասի Կարմիր վանքին նվիրած անշարժ գույքի թվում նշում է նաև «Թղեկրա այգին իւր հողով կատապանավ» (Դիվան, էջ 114): Հունարեն «կատապան» կամ «կատեպան» բառը հայերենում օգտագործվում է այգեպան, այգեգործ, այգի մշակող իմաստներով: Արցախի այցեքարտի՝ Գանձասարի վանքի տաճարի ներսի արձանագրությունը փաստում է, որ Հասան-Ջալալը վանքին նվիրել է անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ երկու գյուղ՝ իրենց շրջակայքով («գեղորայս Մաչեղ, Հարջանտուս բոլորքոջն»), Խաչենաձորը, Այգեստան գետը, խաչվառներ, գրքեր, մատյաններ և այլն: Տաճարի արևմտյան պատի կամարազարդ որմնախորշի ամբողջ տարածությամբ փորագրված արձանագրության համաձայն՝ Հասան Ջալալը վանքին ևս մի գյուղ է նվիրել, իսկ որդին՝ Աթաբեկը, իր հերթին վանքին նվիրել է ոսկետուփ ավետարան և երկու դաշտ՝ դրանք անփոփոխ շրջագծով (Դիվան, էջ 40, 41):

Վերոնշյալ վիմագրերն ի՞նչ իրավիճակ են պարզում: Այն, որ միջնադարյան Արցախում հայ գյուղացին գտնվել է կատարյալ ճորտության մեջ և ամրացված հողին: Նա հողատեր իշխանների սեփականությունն էր հանդիսանում և տերը ցանկացած ձևով կարող էր վարվել նրա հետ՝ նվիրել, վաճառել, կտակել: Մեր օրինակները ցույց են տալիս, որ այդ իրավունքները հողատերը կարող էր իրականացնել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջ գյուղերի նկատմամբ: Հայ պատմագիտության մեջ դեռևս վիճելի է մնում գյուղացիության ճորտացման գործընթացի պարբերացումը միջնադարյան Հայաստանում: Սակայն Արցախի վիմագրերն անառարկելի վկայություններ են, որ անկախ օտար տիրապետությունից, ճորտատիրական իրավունքը Վաչե թագավորից մինչև XIX դարն արմատավորված է եղել Արցախում: Դրա օրինակ է հենց Մարտակերտի շրջանի Վանք գյուղը, որի բնակիչները մինչև ցարական Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացումը (1861թ.) Գանձասարի ճորտերն են հանդիսացել: Այդ հարցում որոշակի պարզություն է մտցնում Գոշի Դատաստանագիրքը: Գոշը նշում է, որ մարդկային բնությունը ազատ եղավ

Արարչի կողմից, իսկ կարիքների համար տերերին ծառայելը՝ հողից և ջրից: Ովքեր չունեն հող և ջուր, ազատ են, ուր կամենան, կարող են գնալ և բնակվել, և թագավորներն ու իշխաններն իրավունք չունեն ստիպել նրանց բնակվելու որևէ գյուղում կամ երկրում[24]: Մեր կարծիքով, Գոշը հասարակ ժողովրդին բաժանել է երկու խմբերի՝ շինականների և գեղջուկների: Առաջինները եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը: Գոշը մեծ անհրավություն է համարել տերերի կողմից շաբաթվա ընթացքում մեկ օրից ավելի գյուղացուն աշխատեցնելը:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ մի շարք այլ վիմագրեր ցույց են տալիս, որ Արցախի ամենախոշոր հողատերը Հասան-Ջալալյան իշխանական և հոգևոր տոհմն է հանդիսացել: Այդ հզչակավոր տոհմը հոգևոր իշխանությունը հզորացնելու համար ոչ միայն ինքն է վանքին նվերներ տվել, այլ նաև իր պահանջով հանդես են եկել այլ նվիրատուներ: Իսկ Հասան-Ջալալի անունից վանքի հոգևոր հաստատությանն Այգեստան անունով գետ նվիրելը միայն կարող է վկայել, թե Արցախ աշխարհում որքան խորն են եղել միահյուսված միմյանց հետ հողային և ջրային ինստիտուտները: Բոլոր դեպքերում հողային իրավունքը գերակա է եղել ջրային իրավունքի նկատմամբ: Միջնադարյան Արցախում ջրային իրավունքի վերաբերյալ պատմությունը շատ աղքատիկ տվյալներ է թողել, բայց կասկած լինել չի կարող, որ այդ հարաբերությունները կարգավորվել են ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմերով: Ջրային ինստիտուտի վերաբերյալ Գոշի հայացքներն ինչ-որ չափով հակասական են: Մի դեպքում Գոշը նշում է, որ ջուրը չի կարող իշխանին կամ թագավորին պատկանել, այլ հողն է միայն նրանց պատկանում («Բայց ջրարբի անդաստանները հնգեմասնյա հարկի տակ լինեն, իսկ տնկիները՝ տասանորդի, որովհետև հողն է միայն իշխանինն ու թագավորինը, այլ ոչ ջուրը: Այդպես և այգետուներն ու ծառաստանները»): Ակնհայտ է, որ ոռոգովի հողերից մեկ հինգերորդ մասով հարկ վերցնելն անուղղակի կնշանակի, որ հարկման առարկա էր հանդիսանում նաև ջուրը՝ լինելով իրավունքի նույնպիսի օբյեկտ, ինչպես և հողը: Մյուս կողմից, Գոշը նշում է, որ «գետերը նրանցն են, ում տարածքից սկզբնավորում են, և ոչ թե նրանցը, ուր հասնում են», այսինքն, Գոշը սեփականության իրավունքի ծագման ելակետային հիմքը համարել է գետի ակունքի պատկանելիությունը: Գոշի վերոնշյալ նորմը մեզ նաև հուշում է, որ հարկման իմաստով ջրազուրկ հողը նվազ կարևոր արժեք է ներկայացրել:

Մեր կարծիքով, ջրի օգտագործման հարցում Արցախում դարեր շարունակ արմատավորված են եղել սովորութային իրավունքի նորմերը: Բնական ջրերից (գետեր, վտակներ, լճակներ, աղբյուրներ) օգտվելու իրավունք են ունեցել տվյալ տարածքի բոլոր բնակիչները, իսկ արհեստական միջոցներով հանած ջրերը (առուներ, ջրանցքներ, ջրհորներ և այլն) համայնքային կամ մասնավոր սեփականություն են հանդիսացել:

Վիմագրերը տվյալներ չեն պարունակում ծագած հողային վեճերի լուծման վերաբերյալ: Սակայն այլ աղբյուրներից պատկերացում ենք կազմում, որ նման վեճերը քննվել և լուծվել են տեղական իշխանավորների կողմից: Հասան-Ջալալյան տոհմից էր քաջ իշխան Աղբաստը, որի անունը հիշատակված է Գանձասարի վանքի հյուսիսային պատի արևմտյան անկյունում: Արձանագրությունից նկատելի է, որ Ջալալի որդի Տեր-Վարդանը, Աղբաստի իշխանության տարիներին, 1443 թ. Ծակ-խաչի հողը նվիրել է վանքին (Դիվան, էջ 55): Արքեպիսկոպոս Սարգիս Ջալալյանը և Մակար Բարխուդարյանը Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում մի ձեռագիր Աստվածաշունչ են տեսել, որի Հռութի գրքի վերջում գրված էր, որ Հասան Ջալալյան տոհմից երկու հոգու միջև 1456թ. վեճ է ծագել հողային և ջրային հարցերի վերաբերյալ: Տոհմի երկու իշխանազունները գնացել են պարոն

[24] *Գանձարան, էջ 410:*

Աղբաստի մոտ, ով և վեց հոգևոր այրերի ներկայությամբ քննել և լուծել է վեճը՝ սահմանելով յուրաքանչյուրի հայրենաբաժին հողերի եզրը և ջրօգտագործման հարցը (վեճի առարկան գտնվում էր Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի տարածքում)[25]:

Օտար նվաճողները մի այսպիսի օրենք էին սահմանել, համաձայն որի՝ ուժով նվաճված երկրի այն հարստությունները, որոնց տերերը վախճանվում էին՝ առանց ժառանգ թողնելու, պիտի անցնեին իսլամի հոգևոր և աշխարհիկ Գերագույն իշխանությանը (Բեյթ-ուլ-մալը): Այդ օրենքն ինչ-որ չափով պաշտպանվում էր արաբական իշխանության օրոք: Սակայն թաթար-մոնղոլների և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում նրանց վերակացուների շահատակություններին չափ ու սահման չկար, որոնք առանց որևէ պատճառի Բեյթ-ուլ-մալի էին ենթարկում տեղական իշխանավորների կալվածքներն ու շարժական գույքը: Բայց կային հայ իշխանավորներ, որոնք պայքարում էին իրենց օրինական իրավունքների և շահերի համար: Ծարա (ԼՂՀ Շահումյանի շրջան) իշխանազունները, որոնց թվում էր նաև Տուրսունի որդի Այտինը, մի շարք գյուղեր, դաշտեր և հանդեր են նվիրել գավառի վանքերի առաջնորդ կարգված Ավագ եպիսկոպոսին: Վիմագիր արձանագրությունն անեծք է ուղղում նվիրատվության պայմանները խախտող անձանց, մանավանդ այլազգիների կամ թուրքերի դեպքում, Աստծուց խնդրելով, որ նրանց «հալալն հարամ լինի և իւր փէյղամբարէն (մահմեդական հոգևոր առաջնորդ՝ Վ.Հ.) ապիզար լիցի ամեն» (Դիվան, էջ 216): Փաստորեն, մահմեդական հրոսակների և բռնակալների ազդեցությունն այնքան իրական ու վտանգավոր է եղել, որ նրանց ուղղված հատուկ նզովք է նշվել արձանագրության մեջ: Պատմական փաստերը վկայում են, որ հետագայում օտար բռնակալները հարքունիս գրավեցին իշխան Այտինի սեփականությունը, բայց քաջ իշխանը չնահանջեց և իր իրավունքները վերականգնելու համար երեք տարի պայքարեց մահմեդական դատարաններում՝ կարողանալով ետ վերցնել իր նախնիների սեփականությունը: Շուշիի խանության տարիներին պատմական Քարվաճառում /ներկայումս՝ ԼՂՀ Շահումյանի շրջան/ հայկական տարրը դուրս մղվեց, և շրջանը բնակեցվեց խաշնարած քուրդ ցեղերով: Դադիվանքին պատկանող լայնատարած կալվածական հողերն անիրավությամբ տրվեցին քրդերին և ազերիներին: Կարծես դա քիչ էր, Ղարաբաղի վանքապատկան հողերի մի մասն էլ անցավ եկվոր ցեղերի ձեռքը: Այդ անարդարության դեմ անհաշտ պայքար մղեց Ղարաբաղի հոգևոր առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտը: Նա ցարական դատարաններում տարիներ շարունակ դատ վարեց խաների ժառանգների և թուրք բեկերի դեմ՝ ծախսելով մինչև 30.000 ռուբլի, և կարողացավ հետ վերցնել սեփականության իրավունքով հայ ժողովրդին պատկանող հողերը: Սակայն նրա մահից հետո նրա հաջորդների անհոգության և ընչաքաղցության պատճառով մեր ժողովրդի ազգային հարստությունը նորից անցավ մահմեդականների ձեռքը:

Խորհրդային Միության տարիներին պատմական Քարվաճառի /ադրբեջաներեն՝ Քյալբաջար/ շրջանը վերածվել էր մի հավաքատեղիի, որտեղ պատսպարված անասնագողերի նշանակետը Լեռնային Ղարաբաղի տարածքն էր, որոնք էլ Դադիվանքը դարձրել էին ոչխարների մակաղատեղ: Դեռ ավելին, նրանք վնասել էին վանքի շենքերը, որմնանկարները և արձանագրությունները: Արցախի ինքնապաշտպանության ուժերը, կատարելով նախնյաց պատգամը, կարողացան 1993 թ. մարտ-ապրիլ ամիսներին ազատագրել պատմական Քարվաճառի շրջանը: Դադիվանքն իր արժեքավոր արձանագրություններով և աշխարհում հավասարը չունեցող բարձրարվեստ երկու խաչքարով մշտապես դարձավ հայ ժողովրդի սեփականությունը:

Մեր նախնյաց պատգամներին հանդիպում ենք նաև Գանձասարի վանքի

[25] *Արցախ, էջ 120:*

տաճարի արևմտյան պատի հարավային մասում՝ Հասան-Ջալալի և նրա որդու՝ Աթաբեկի թողած արձանագրության մեջ, որտեղ հայր ու որդի սերունդներին ավանդում են թույլ չտալ, որ վանքապատկան հողերը մահմեդականների սեփականությունը դառնան (Դիվան, էջ 40): Հասան-Ջալալյան տոհմը կարծես կանխատեսել էր, որ օտար ցեղերը միշտ դրան են ձգտելու: Այդպես եղել է, բայց հուսանք, որ չի շարունակվի: Իր ազգակիցներին աղվանների հետնորդներ համարող պատմաբան Ֆարիդա Մամեդովան, լսելով (աղբյուրը չի նշում՝ Վ.Հ.), որ Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա-ն Խորհրդային Ադրբեջանի կառավարությունից թույլտվություն է վերցրել՝ Գանձասարի վանքը վերանորոգելու համար, հայերի «զեղծարարությունների» առաջն առնելու նպատակով ոտքի է կանգնեցրել ազգակից գիտնականներին և 1978 թ. մի գիշեր եկել, հասել Գանձասար: Վանքի պահակը բացել է դուռը, և նրանք, ջահերով մտնելով վանքի ներսը, բոլորի համար բարձրաձայն «կարդացել են» այն արձանագրությունը, որի մեջ իբր թե գրված էր, որ Հասան-Ջալալը Գանձասարը կառուցել է «իր աղվանից ազգի համար»[26]: Համոզված ենք՝ կեղծիքներից չխորշող վայ-գիտնականը միայն կարող է նման հերյուրանքներ թույլ տալ իրեն: Քսաներորդ դարավերջին Ադրբեջանի կողմից Արցախին ու նրա ժողովրդին պարտադրված պատերազմը վերստին բացահայտեց ադրբեջանական իշխանությունների նենգ նպատակները: 1992 թ. հոկտեմբերի 28-ին և 29-ին վանքը հրթիռակոծության ու ռմբակոծության ենթարկվեց: Սակայն արձակված բոլոր ռումբերը և հրթիռները պայթել են եկեղեցուն չհասած՝ գմբեթի վերևում: Գանձասարն անխոցելի մնաց: Եկեղեցուն հասած միակ արկը մխրճվեց պարսպի մեջ: Ասում են, թե եկեղեցու խորանի երկու կողմերում գտնվող հրեշտակների պատկերները հայտնվել են հենց այդ օրերին:

Արցախի վիմագրերում ոչ սակավ հանդիպում ենք «պարոն» և «պատրոն» եզրույթներին, որոնցից էլ ծագել է «պարոն-տերության» ինստիտուտը: «Պարոն» բառը փոխառված է միջնադարյան Եվրոպայում լայնորեն տարածված «բարոն» տիտղոսից, և այդ բառը հայերենում առաջին անգամ գործածվել է Կիլիկյան Հայաստանում ու նշանակել «իշխան, մեծավոր»: Սակայն այդ ինստիտուտը Կիլիկյան Հայաստանում չունեցավ այնպիսի դրսևորում, ինչպես բուն Հայաստանում: Անկախ, կենտրոնաձիգ պետականության բացակայության պայմաններում «տեր», «իշխան», «իշխանաց իշխան» եզրույթներին աստիճանաբար փոխարինելու եկան նույնանման իմաստ ունեցող «պարոն» և «պատրոն» բառերը: Այդ տիտղոսը կրողները, որպես կանոն, զբաղվում էին հովանավորչությամբ, որի համար կոչվում էին պարոնտերեր: Սա տեղի էր ունենում հատկապես այն դեպքում, երբ աշխարհիկ հայ մեծավորները հովանավորության տակ էին առնում իրենց տիրույթներում գտնվող վանքերը: Պարոնտերության ինստիտուտը կարող է միայն վկայել, որ Արցախում աշխարհիկ իշխանությունը երբեք չոչնչացավ և պարոնտերերը, իրենց ձեռքում պահելով հայրենական կալվածքները, իսկ մի մասն էլ նվիրելով հոգևոր իշխանությանը, հիմք ստեղծեցին մի նոր պետական կազմավորման, որը պատմության մեջ կոչվում է Արցախի մելիքություններ:

Ամենավաղ հիշատակված «պատրոն» բառին հանդիպում ենք Դադիվանքից ներքև Թարթառ գետի ափին, հին կամրջի մոտ կանգնեցված խաչքարի վրա: Խաչքարը կանգնեցրել է Հաթերքի, Հանդաբերդի և Հավքախաղացի տեր, Հասանի որդի Կյուրիկիեյի թագավորի թոռ «բարեպաշտ պատրոնիկն Վասակ»-ը 1209 թ. (Դիվան, էջ 129): XIIIXVIII դարերի վիմագրերում հիշատակված «պատրոն» բառն այլ բան չի նշանակում, քան այն, որ դրանց կրողներն ազգային իշխանությամբ օժտված անձինք էին: Ծարա վանքի գեղաքանդակ խաչքարի վրա արձանագրության մեջ (1430 թ.) Այդինը հանդես է գալիս խրոխտ տիտղոսով՝ որպես փոքր Սյունիքի,

[26] *www.Erevangala500 .com 06.03.2012:*

Ականայի, Հաթերքի, Հանդաբերդի և Գեղամա ծովակի հարավ-արևելյան շրջանների տեր, որպես մեծ իշխան, քաջ և հաղթող զորավար, պարոն Շամշինի որդի (Դիվան, էջ 224): Ծարա վանքի մեծ արձանագրությունը վաղուց է ոչնչացվել մահմեդականների կողմից, դրա բովանդակությանը կարելի է ծանոթանալ միայն գրքերում: Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Մուղդուսին գերեզմանոտ» կոչվող հին հանգստարանում բազմաթիվ խաչարձաններ են եղել, որոնց կանգնեցնողները հիշատակված են պարոնտեր տիտղոսով: Ահա դրանցից մեկի արձանագրությունը. «Կամաւն աստուծոյ պարոն տեր Ոհանէս կանգնեյի սուրբ խաչերս թագավոր Շահ Աբազն, երկրիս պարոն տէր Ոհանէս»[27]:

Վիմագրերից կարելի է կռահել, որ XIV-XVIII դարերում պատմական Արցախում գահերեց կամ իշխանաց իշխան տիտղոսներ կրողներ չեն եղել, բայց գավառների իշխանազունները, պարոնները, պատրոններն ազգային իշխանություն են ներկայացրել և պետականության հարցերում միմյանց հետ համերաշխ եղել, օտար տիրապետության պայմաններում կարողացել պահպանել հայրենի հողը, ազգային շահը: Օրինակ, Մարտունու շրջանի Հերհեր գյուղի 1667 թ. կառուցված Սբ.Գրիգորիս եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա փորագրված է, որ եկեղեցին կառուցվել է Սուլեյման շահի թագավորության, Վարանդայի մելիք Բաղրի իշխանության և Միրզա Ղուլի բեկի պարոնության տարիներին (Դիվան, էջ 165):

Նյութական մշակույթի մի շարք աղբյուրներ վկայում են, որ Արցախի բնիկ տերերը կարողացել են քոչվոր տիրակալների սեփականությունը դարձած հայկական հողերի մի մասը և որոշ գյուղեր գոնե առուվաճառքի պայմանագրերի ձևով հետ վերցնել: Ահա մի այդպիսի վավերագիր. «Երևելիներից լավագույնը՝ Նաֆասկուլի Թուշմալ Խալիլֆախր-էդ-դինլուն, իր նմանների մեջ լավագույնին՝ Ֆաղանի Աշեղ Դիվանլուին, շարիաթական վաճառքով, քաղաքներում ընթացիկ Թավրիզի տասներկու թումանով, որի կեսը պարզ լինելու համար Թավրիզի վեց թուման է լինում, վաճառեց. Քոչիզի Խազազ գյուղի (ԼՂՀ Մարտունու շրջանում՝ Վ.Հ.) ամբողջ վեց դանգ մուլքը իր չորս սահմաններով»[28]:

Վիմագրերը նաև վկայում են, որ նույնիսկ օտարների տիրապետության պայմաններում քաղաքացիական գործերի մի մեծ շրջանակ ընդդատյա է եղել հայոց աշխարհիկ և հոգևոր դատարաններին:

Պատմական Արցախի տարածքում շատ քիչ ենք հանդիպում արաբատառ պարսկերենով, արաբատառ ադրբեջաներենով և ռուսատառ ադրբեջաներենով վիմագիր արձանագրությունների, իսկ եղածներն առնչություն ունեն միայն XIX դարի հետ: Վիմագրերը մեզ աներկբա հուշում են, որ մահմեդական տարրը մեր երկրամասում բնավորվել է նոր ժամանակներում՝ հասցնելով 4 անգամ փոխել իրենց այբուբենը և ազգությունը:

Այսպիսով, պատմական Արցախ աշխարհի վիմագրերում օգտագործվող «ինքնակալ», «տիրակալ», «թագավոր», «թագավորություն», «թագավորազուն», «թագուհի», «իշխանաց իշխան», «իշխան», «իշխանություն», «իշխանուհի», «հայրապետ», «հայրապետություն», «կաթողիկոս» եզրույթները և տարբեր տեսակի գործարքներից բխող հիշատակությունները միայն կարող են վկայել, որ Արցախը կուլ չգնաց օտար ցեղերի ասպատակություններին, երկրամասում երբեք չմարեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, այլ ընդհակառակը, այն XVII և XVIII դարերում ազգային-ազատագրական պայքարի պատվար հանդիսացավ, որտեղ գլուխ բարձրացրեց հայրենիքի ազատագրության գործը: Սակայն այդ ժամանակաշրջանում քաղաքական անբարենպաստ հանգամանքների պատճառով, այն չիրականացավ, արցախյան

[27] Արցախ , էջ 129:

[28] Հակոբ Փափազյան, «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», պրակ 1 (ԺԴ-ԺԶ դարեր), Երևան, 1968, էջ 116:

հիմնախնդիրը միշտ էլ մնաց և Խորհրդային Միության փլուզման նախօրյակին նոր թափ ստացավ ու ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ պսակվեց հաջողությամբ, որի առհավատչյան ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է՝ պետականության բոլոր բնորոշիչներով:

Խորհրդային իշխանության օրոք Ադրբեջանը, շարժվելով ավագ եղբոր՝ Թուրքիայի ծրագրերով, իր տարածքում գտնվող հայկական մշակույթի նկատմամբ աչքի ընկավ աննկարագրելի բարբարոսական ակտերով՝ նպատակ ունենալով մշակութային ջարդի միջոցով վերացնել հայկական հետքը: Առաջին հերթին, հայկական բոլոր հուշարձանները, Խորհրդային Ադրբեջանի կառավարության 1988 թ. ապրիլի 27-ի թ. 145 որոշմամբ, համարվեցին աղվանական: Համարելով, որ դա քիչ է, Ադրբեջանն ավելի հեռուն գնաց: Նա հայ մշակույթի արժեքներից իր վրեժը լուծելու համար չխորշեց նույնիսկ պայթեցնել հայկական եկեղեցիները և Արաքս գետը լցնել պատմական Ձուղայի խաչքարերը: Նույն ճակատագրին արժանացան նաև Հաթերք գյուղի «Մուղդուսին գերեզմանոտ» կոչվող հին հանգստարանի վիմագիր խաչարձանները: Խորհրդային Միության տարիներին Բաքվի կողմից Արցախի վարչատարածքային սահմանների կամայական վերաձևման արդյունքում, վերոնշյալ տարածքը հանձնվեց ադրբեջանական Ումուդլու /ներկայումս՝ Ականաբերդ հայկական համայնքը/ գյուղին, որի սովխոզի տնօրեն Աբիլովն անցյալ դարի 80-ական թվականներին բուլդոզերով հողին հավասարեցրեց գերեզմանոցը՝ հողով ծածկելով պատմաիրավական արժեք ներկայացնող խաչարձանները: Արցախյան շարժման տարիներին Գետաշենի մոտ գտնվող Եղնասարի վանքը տանկերի և թնդանոթների համազարկով նույնպես հողին հավասարեցվեց: Միայն Արցախի հարակից տարածքների ազատագրումից հետո լիովին ակնհայտ դարձան կատարված վայրագության նողկալի հետքերը: Ծարա վանքը, որը հիմնադրվել էր 1301 թ. և գտնվում էր ներկայիս Շահումյանի շրջանի Ծար գյուղում (Թարթառ և Ծարա վտակի խառնարանի անկյունի բարձրադիր բլուրի վրա), Խորհրդային Ադրբեջանի կողմից քանդվել է և նրա քարերով մոտակա քրդաբնակ գյուղում դպրոցի շենք կառուցվել: Ֆիզուլի շրջկենտրոնից դեպի Հադրութ քաղաքը տանող ճանապարհի եզրին, նախկին Կարգաբազար գյուղի մոտ, կա մի հին իջևանատուն՝ կառուցված հայ ճարտարապետության միջնադարյան լավագույն ոճով: Իջևանատունն ունեցել է 1681 թ. հայատառ արձանագրություն: Հայատյացության վանդալիզմը չի խորշել նաև այդ արձանագրությունը ոչնչացնելուց:

Հանուն ճշմարտության պետք է ասել, որ արձանագրությունների մի մասի անհետացումն էլ կապված է մեր իրականության մեջ երբեմնակի կամա-ակամա տեղ գտնող բացասական երևույթների հետ: Ակադեմիկոս Հ.Օրբելին մի այսպիսի դեպք է նկարագրել. «Բավական էր անհեթեթ լուր տարածվեր, թե դատարանը Խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը լուծելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմերով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII-XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություններ, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելն ապացուցող վավերագրերը»[29]:

Մեր օրերում, երբ Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությամբ ադրբեջանական է համարում, իսկ գրավյալ տարածքներում մշակույթի հուշարձանները ոչնչացնում կամ ուդինա-աղվանական անվանում, ավելի հրատապ է դառնում պահպանել հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի մնացյալ քարակերտ ժառանգությունը, որն, ի տարբերություն ձեռագիր մատյանների, օրեցօր, մեր աչքից հեռու, մեր աչքի առաջ

[29] *Դիվան, պրակ 1, էջ 13:*

վնասվում, փչանում և ոչնչանում է: Հենց դրան է ուղղված Արցախի Սահմանադրության 15-րդ հոդվածը, որից նկատելի է, որ պատմական և մշակութային հուշարձանները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

1994 թ. մայիսյան հրադադարից հետո հայ ժողովուրդն իր պատմության հուշարձանների մի մասը գտավ ավերակների կույտի մեջ, իսկ մյուս մասն էլ դեռևս թաքնված հողի տակ, սպասում էր իր հետազոտողին: Կատարվեցին բազմաթիվ պեղումներ և հետազոտություններ, սակայն վերջին հայ-թուրքական պատերազմը խառնեց ամեն ինչ: Ամեն պարագայում, օրենքը պետք է խիստ լինի պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնողների կամ վնասողների հանդեպ: Մեր կարծիքով, ԼՂՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պատիժները շատ մեղմ պետք է համարել պատմության և մշակույթի հուշարձանների նկատմամբ ոտնձգություն կատարողների նկատմամբ:

Այսպիսով, Արցախի վիմական արձանագրությունները վկայում են, որ ազգային–պետական իշխանությունը մեր երկրամասում երբեք չի ընդհատվել, չի մարել, և այն շարունակվել է մինչև XIX դարի սկիզբը, որպես հայոց պետականության մի անմար փարոս:

Արցախի վիմագրերը ոչ միայն խոսուն վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու, այլև՝ կարևոր կռվան Արցախի հարցի արդարացի լուծման գործընթացում, քանզի, անկասկած, ելակետային դրույթներ են պարունակում առարկայական բանակցությունների համար:

ВОПРОСЫ ГОСУДАРСТВЕННОСТИ И ПРАВА В ЛИТОГРАФИЯХ АРЦАХА - ***ВЛАДИМИР ОСИПЯН*** *- В статье автор пытается обнаружить и описать историко-юридическую ценность и значение литографии, находящиеся на нашей планете, глубоко осознавая и не исключая то, что его исследование не останется в стороне от недостатков.*

Автор обосновывает то, что согласно литографии, в Арцахе никогда не прерывалась, не угасала национально- политическая власть; она продолжалась до 10-х гг. 19-ого века, как твердый фрагмент армянской государственности.

Арцахские литографии –не только говорящие свидетели, полноценно освещающие не только многовековые страницы армянской истории, но и важнейшей борьбой в процессе справедливого решения арцахского вопроса, так как , несомненно, содержат исходные уровни для предметных переговоров.

Ключевые слова*: литография, церковное право, светское право, законное право, Тигранакерт, Гандзасар, Дадиванк, Есаи абу Мусе, Гасан- Джалал, Мелик Еган, надгробие, государственность, герб, пожертвование, земельный спор, договор.*

THE QUESTIONS OF A STATEHOOD AND LAW IN ARTSAKH`S INSCRIPTIONS - ***VLADIMIR HOVSEPYAN*** - *The article examines the lithographs found in the historical territory of Artsakh, which contain important information about ecclesiastical and secular law. These information are diverse: political, economic, social, legal, etc.*

In this article, the author tries to discover and describe the historical and legal value and significance of lithographs logated on our planet, deeply realizing and not excluding the fact that this research will not stay away from the disadvantagesfor .

The author substantiates that according to the lithography, the national- political power in Artsakh has never been interrupted it continued unfil the 19th century.

The Artsakhian lithographs are not only speaking witnesses, fully covering not only the centuries old payes of Armenian history, but also the most imposrtand struggle in the process of a fair salution of the Artsakh issue, since they undoubebly contain the initial levels for substantive negotiations.

Keywords*: lithography, ecclesiastical law, secular law, legal law, Tigranakert, Gandzasar, Dadivank, Yesai abu Musa, Hasan- Jalal, Meliqk Yegan tombstone, statehood, coat of arms, donation, land dispute,contract.*